ԵՐԿԳՈՒՅՆ-ԵՐԿՀԱՐԿ ՏԻԵԶԵՐՔԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Նախնադարյան մարդու միտքը առասպելաբանության ոլորտը մղած հակադրամիասնություններ երկանդամ համակարգին բնորոշ էր զույգ նկատված իրերի և երևույթների մեջ որևէ հատկանիշի առկայության կամ բացակայության շեշտումը[1]*։ Հնդեվրոպական ժողովուրդների նախնիների առասպելաբանության մեջ այդ համակարգի երբեմնի գոյությամբ են պայմանավորված երկգույն-երկհարկ տիեզերքի (լուսավոր երկինք և խավար երկիր) պատկերացումները։ Չնայած հայկական առասպելաբանության մեջ եռահարկ տիեզերքի (երկինք, երկիր, ընդերք) մասին պատկերացումը ավելի հաճախ է հանդիպում, այսուհանդերձ երկգույն-երկհարկ տիեզերքի առավել նախնական պատկերացումը վերջինիս կողմից լրիվ դուրս չի մղվել։*

Խոր հնադարից է գալիս նաև տիեզերքի լուսավոր և խավար երկու հարկերը (երկինք և երկիր) երկրի մակերևույթի լուսավոր և խավար գոտիների (հարավ և հյուսիս) հետ առասպելաբանորեն համադրելու երևույթը[2]*։ Այսպիսի համադրումները փ վերջո հանգեցրել են մի կողմից «լուսավոր» (երկնային-հարավային), մյուս կողմից «խավար» (երկրային-հյուսիսային) հասկացությունների, այդ թվում և սպիտակ ու սև հիմնագույների հակադրմանը*[3]*։ Վերջին դեպքում իր վճռական դերն է խաղացել նաև հների պատկերացումը տարածության և գույնի անքակտելի կապի մասին*[4]*։*

Սպիտակ և սև գույները հակադրամիասնությունների երկանդամ համակարգի մեջ մտնելու, այսինքն՝ պաշտամունքային ոլորտ մղվելու[5] *պատճառով էլ աշխարհի շատ ժողովուրդների լեզուներում դրանց նշող բառերը ենթարկվել են տարբերման։ Այս առթիվ հիշենք, որ հայերեն համապատասխան բառերը՝ սպիտակ և սեաւ, ոչ թե բուն հայկական (հայերենի հնդեվրոպական միջուկին պատկանող), այլ իրանական փոխառյալ ձևեր են*[6]*։ Սպիտակ և սև են հայկական հեքիաթներում լույս և մութ աշխարհները խորհրդանշող զույգ այծերը։ Արցախյան մի հեքիաթում վիշապասպան կրտսեր եղ-*

---

1 Мифология и верования народов Восточной и Южной Азии, М., 1973, с. 157; В. В. Иванов, В. Н. Топоров. Исследования в области славянских древностей М., 1974, с. 259—305.

2 Б. Л. Рифтин, Инь и Янь (Мифы народов мира, т. I, М., 1980, с. 547); *Նույն*, Ба гуа (Мифы народов мира, т. I, с. 149); Из книг мудрецов. Проза Древнего Китая, М., 1987, с. 7.

3 С. Петросян, Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян *(ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտություններ, 1986, № 4, էջ 53—64)։*

4 В. Н. Топоров, Пространство и текст (Текст: семантика и структура. М., 1983, с. 245, прим. 33).

5 *Հնդեվրոպական ժողովուրդների նախնիները սպիտակ գույնը համադրում էին նաև բարոյական անաղարտության, իսկ սևը՝ արատավորության և տգիտության հետ* (J. Dumezil, Les „trois fonctions" dans le Rig-Veda et les dieux Indiens de Mitanni Académie Royale de Belgique. Bulletin de la Classe des Lettres et des Sciences Morales et Politiques. 5e serie. Paris, 1961, p 265—298);

6 *Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979, էջ 195—196, 264—265։*

բայրը ավազ եղբայրների դավերի հետևանքով մնում է խոր հորում։ Իր ազատարարի ճակատագրով մտահոգված նրա հարսնացուն նրան խորհուրդ է տալիս. «...տու կըքյինաս էսհինչ տըեղը մին ախպուր կա, մին սև էծ, մինգյել մին սիպտակ էծ միշտ կյամ ըն էտ ըխպըրան ճուր խմում, լոք կըտաս եր փինխս էտ սիպտակ էծին մաշկեն նստես, քեզ տուս ա ունննական լուս ախշարքը, իսկ վըեր շիլ ինգյիր սև էծին մաշկեն նստեցեր, տուս ա ունննական ավելի մթեն ախշարքը»[7]։ Անկասկած, սպիտակ այծը խորհրդանշում է լույս աշխարհը (ուրեմն, նաև երկինքը և հարավը), իսկ սևը՝ մութ աշխարհը (նաև երկիրն ու հյուսիսը)։ Լույս և մութ աշխարհները խորհրդանշող զույգ այծերին կարելի է հանդիպել Հայկական լեռնաշխարհի մ. թ. ա. IV—III հազարամյակներով թվագրվող բազմաթիվ ժայռապատկերներում[8]։ Գեղամա լեռների ժայռապատկերներում նրանք հաճախ հանդես են գալիս այնպիսի պատկերանշանների հետ, որոնք խորհրդանշում են մի կողմից արևն ու ցերեկային լույսը, իսկ մյուս կողմից՝ լուսինն ու գիշերային խավարը[9]։ Այս առթիվ արժե հիշել նաև խեթերի ամպրոպի աստծու ուղեկից զույգ եզներին, որոնք կրում էին հակադրամիասնական «գիշեր» և «ցերեկ»[10] (կամ «առավոտ» և «երեկո»)[11] նշանակող խուռիական անուններ։

Լեռների և եղջերավոր էակների առասպելաբանական նույնացման շնորհիվ, այսպիսի պատկերացումները տարածվել են նաև հակադրամիասնական ընկալված հարավային և հյուսիսային լեռների վրա։ Այս տեսանկյունից ուշագրավ են Արևելյան (Հայկական) և Ներքին Տավրոսների տեղական հին անունները։ Այս լեռնաշղթաներից առաջինը հնում կոչվում էր Ցուլ[12], իսկ հյուսիսայինը՝ Պախրայ[13]։ Վերջին երկու լեռնանունների հիմքում ընկած հայերեն համապատասխան բառերից ցուլ-ը հ.-ե. ծագմամբ բառ է[14], իսկ պախրայ (նաև պախրէ) բառը[15] դեռևս հուսալի ստուգաբանություն չունի։ Վերջինիս զուգահեռ ձևեր համարվող սեմական տարբեր լեզուների բառերը «նման, բայց ձայնապես անհարմար են»[16]։ Պակաս ուշագրավ չեն Մոկքի երկու ամենաբարձր լեռների՝ Առնոս (հարավային) և Արտոս (հյուսիսային) անունները։ Նախապես ասենք, որ այս զույգ լեռները կարող էին հակադրամիասնական ընկալվել հենց իրենց աշխարհագրական դիրքի պատճառով։ Նույն այդ պատճառով սրանք հակադրամիասնական էին ընկալվելու նաև գունային տեսանկյունից (հիշենք հարավ-սպիտակ և հյուսիս-սև հակադրամիասնական շարքերը), որի մասին է, կարծես, վկայում «Արտոսա սար սև ի, չի սըվտըկի» շատախյան առածը[17]։ Երբ դրա հետ նկատի ենք առնում

7 Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 7, Երևան, 1979, էջ 13։

8 Հ. Մարտիրոսյան, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 190 (Գեղամա լեռներ, աղ. 127, նկ. 10)։

9 Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները (Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 6, ժայռապատկերներ, պրակ. 2, Երևան, 1971, № 330)։

10 A. Gö ze, Kle nasien (Kü'turgeschich e ‹es Allen Or en:s, Ill. 1, Munchen 1957 S. 140).

11 И. М. Дьяконов, Хуррито-урартский и восточнокавказские языки (Древний Восток, 3, Ереван, 1978, с. 32, прим. 19).

12 Փավստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն հայոց, Երևան, 1987, էջ 62—63։

13 Համտ. այս նույն լեռնաշղթաների Տաւրոս անունները, երբ Ταῦρος <հին հունարեն Ταῦρος «ցուլ»։

14 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 462։

15 Թերևս, պախրայ բառն է առկա հնագույն Հայաստանի տարածքում խեթերի հիշատակած Paḫura և Paḫurina տեղանուններում։ Վերջինս նաև լեռնանուն է (В. Н. Хачатрян, Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971, с. 116, 118, 120).

16 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 7։

17 Ա. Տ. Ղանալանյան, Առածանի, Երևան, 1960, էջ 85։

նաև սպիտակ-արական և սև-իգական հակադրամիասնական շարքերի գոյությունը[18], ապա պարզ է դառնում, թե ինչու այդ լեռները կրում էին Առնոս և Արտոս անունները։ Այլ կերպ ասած, այս լեռնանուններից առաջինի հիմքում ընկած է առն «վայրի արու ոչխար» բառը, իսկ երկրորդի հիմքում՝ արտի (նաև արտիկ) «վայրի էգ ոչխար» բառի արմատը[19]։ Առն բառը սերում է հ.-ե. *ṷṛ̥ṇ - արմատից, որից են ծագում նաև հ.-ե. մի շարք լեզուներում «արու», «այր», «խոյ», «ցուլ» նշանակող բազմաթիվ բառեր[20]։ Իսկ Արտոս լեռնանվան և արտի (արտիկ) բառի հիմքում ընկած *արտ-արմատը կարելի է հայերեն զարգացումն համարել հ.-ե. այն նույն արմատի, որն ընկած է նաև հայկական Արտին (նաև Արտենի) լեռնանվան[21], թրակյան Ardis («եղջերու») անձանվան և ալբաներեն ardhi «եղջերու»[22] բառի հիմքում։ Այս առթիվ հիշենք, որ հ.-ե. *dr- > հայ. արտ-զարգացումը ևս հայերենում օրինաչափական է[23]։ Խեթական արձանագրությունների տվյալներից կարելի է հանգել այն հետևությանը, որ Առնոս և Արտոս լեռնանունները Ardis տեսքով Հայկական լեռնաշխարհում գոյություն ունեին դեռևս մ. թ. ա. II հազարամյակում[24]։

Հնագույն հայերի առասպելաբանության մեջ տիեզերքի երկու հարկերը և երկրի մակերևույթի երկու գոտիները իրենց գունային դրսևորումներն էին գտնում ոչ միայն սպիտակ ու սև այծերի կամ ոչխարների, այլև սպիտակ ու սև ջրերի (աղբյուրների, գետերի, լճերի, ծովերի) տեսքով։ Այս տեսանկյունից հատկապես ուշագրավ է սպիտակ և սև ծովերի վերաբերյալ մինչև մեր դարաշրջանը պահպանված առասպելաբանական պատկերացումը[25]։ Ընդ որում, անկասկած է, որ հնագույն հայերի կողմից սպիտակ ծովը համադրվել է հարավային ծովի, իսկ սև ծովը՝ հյուսիսայինի հետ[26]։ Հակադրամիասնությունների երկանդամ համակարգի գունային այսպիսի դրսևորման արգասիք պետք է լինեն նաև հայկական հեքիաթների սպիտակ և սև աղբյուրները՝ իրենց առնչվող լուսերես և սևերես անձնավորություններով։ Լոռիում գրի առնված մի հեքիաթում մարդ ու կին (երկակի հակադրամիասնություն) ունեն երկու դուստր, որոնցից մեկը բարի և գործունյա է, իսկ մյուսը չար է և ան-

---

18 В. Н. Топоров, Семантика мифологических представлений о грибах (Balcanica. Лингвистические исследования, М., 1979, с. 247—248).

19 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Երևան, 1979, էջ 307, 382, Հ. Աճառյան, Նշվ. աշխ., հ. Ա, Երևան, 1971, էջ 261, 343։

20 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 261։

21 Հ. Կարագյոզյանի կարծիքով նույն լեռնանունն է Արտինե տեսքով հիշատակված ուրարտական արձանագրություններից մեկում (Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 1931, էջ 93, ծան. 5)։ Արտիկ բառը կարելի է տեսնել Հայկական լեռնաշխարհի հարավում՝ Մուսասիրի և Խորուշկիայի միջև, հիշատակված Ardiki լեռնանվան մեջ (տե՛ս Н. В. Арутюнян, Топонимика Урарту, Ереван, 1985, с. 33).

22 В. И. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958, с. 118, 120.

23 Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 117, 118։

24 Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 330—331, 417, 505։

25 Երվանդ Լալայան, Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 237։ Աշխարհի շատ ժողովուրդների առասպելաբանական պատկերացումներում երկնային (վերին) կենարար ջրերը հակադրվում էին երկրային (ստորին) մեռյալ ջրերին [С. С. Аверинцев, Вода (Мифы народов мира, т. I, с. 240)]:

26 С. Петросян, Древнейшие названия., с. 54—60.

բան (դարձյալ երկակի հակադրամիասնություն)[27]։ Հոր սիրելի աղջիկը, հակադրամիասնությունների երկանդամ համակարգի համաձայն, բարին և աշխատասերն է, մոր սիրելին՝ չարն ու ծույլը։ Կախարդ պառավը սրանցից առաջինին «ասըմ ա.- Բալա ջան, ես քի շատ հավան կացա, դուն իմ ախչիկն ես, իմ ըխչկանից էլ շատ սիրեցի։ Ասըմ ա.—Հրես ըստիան էրկու ջուր ա դալի, մինը սև ա, մինը սպիտակ, գլուխըդ կոխե սպիտակ ջրի տակն ու անց կաց։ Դա որ տհե ա անըմ ու անց կենըմ հա, մազերը դառնըմ են ոսկի»[28]։ Հերթը հասնում է երկրորդ (հորը և առաջին ըստերը խորթ) քրոջը՝ չար անբանին։ Կախարդ պառավը սրան «ասըմ ա.—Դե արի ըստի։ Գնըմ ա խուշտր, ասըմ ա.—Ըստիան էրկու ջուր ա գնըմ, մինը սպիտակ ա, մինը սև. գլուխդ սպիտակի տակին չի դնես, սևի տակին կդնես։ Գալիս ա, գլուխը դնըմ սևի տակին, էնա հա, դրա էրեսը սևանըմ ա»[29]։

Հակադրամիասնությունների երկանդամ համակարգի գունային նույնպիսի դրսևորման արգասիք պետք է լինեն նաև Եփրատի երկու մեծ վտակների հայկական անունները։ Դրանցից հարավային դիրք ունեցող Արևելյան Եփրատը (այժմ՝ Մուրադ) հին հայերը կոչում էին **Արածանի**, իսկ հյուսիսային դիրք ունեցող Արևմտյան Եփրատը (այժմ՝ Կարասու) կոչվում էր նաև **Սև ջուր**: Հետաքրքիր է, որ միևնույն արմատներից կազմված և, հավանաբար, նույնիմաստ անունների հանդիպում ենք նաև հին Սոփքի տարածքում։ Խոսքը Խարբերդի դաշտը ոռոգող զույգ գետակների **Արծուակ** և **Սև գետակ** անունների մասին է («Սև գետակ կանցնի Ուլ-ովայեն, և Արծուակ գետակը՝ Գուզովայեն»)[30]։

Արածանի, սեպագր. Arsania, հին հուն. 'Αρσανίας, լատին. Arsanias, ասոր. Arsania, Arzania, արաբ. Arsanas գետանվան[31] գոյությունը արձանագրված է դեռևս մ. թ. ա. IX դ.։ Նրա առաջին բաղադրիչը հայերենում ներկայանում է երկու **ա**-երով, **արած**-, իսկ օտար ձևերում՝ մեկ **ա**-ով՝ **արծ**-: Սա պետք է բացատրել կամ հայերենում համեմատաբար ուշ տեղի ունեցած ***Արծանի** > **Արածանի** անցումով (**Արա**-սկզբնամասով տեղանունների ազդեցությամբ. հմմտ. **Արագած, Արած, Արախ, Արարատ**), կամ, որն ավելի հավանական է, միևնույն գետանվան երկու՝ **Արածանի** և ***Արծանի**, տարբերակների գոյությամբ։ Այս դեպքում պետք է ենթադրել, որ **արած**-ը ծագում է հ.-ե. միևնույն արմատի *arəg'-, իսկ **արծ**-ը՝ նրա *arg'- տարբերակից։ Վերջինից են սերում ինչպես հայերեն **արծաթ, արծնել, արծարծել** բառերի արմատները, այնպես էլ հուն. ἀργός «փայլուն, սպիտակափայլ, սպիտակ», ἀργής «սպիտակությունից փայլող, ցոլուն», հին հնդկ. árjuna «սպիտակ», թոխար. ārkwi «սպիտակ», լատին. argutus «լուսամիտ, իմաստուն» բառերը (հ.-ե. այս արմատից են սերում նաև ժառանգ լեզուներում «արծաթ» նշանակող բազմաթիվ բառեր)[32]։ Հ.-ե. «արմատի նախնական իմաստն է, ուրեմն, «փայլ, ցոլք, լույս», որից՝ **արծնել** «փայլեցնել», **արծարծել** «վառել, այսինքն՝ նորից փայլեցնել»[33]: Այս արմատն է ընկած նաև ուրիշ մի շարք գետանունների հիմքում։ Դրանցից հատկապես ուշագրավ է վերոհիշյալ Ար–

27 Նախնադարյան առասպելներից սկսած առասպելաբանական հակոտնյա զույգերը օժտված են նաև բարոյական հակադիր հատկանիշներով (Е. А. Костюхин, Типы и формы животного эпоса, М., 1987, с. 42):

28 Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 8, Երևան, 1977, էջ 388։

29 Նույն տեղում, էջ 389։

30 Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 362։ Այս տեսանկյունից ուշագրավ է նաև Վանա լճի հնագույն հայկական անուններից մեկը, որը Ստրաբոնը բերում է Αρσηνη ձևով (Strabo, XI, 14, 8, XVI, 1, 21)։ Ըստ երևույթին, **Արածանի** և **Արծուակ** գետանունների նման լճանվան հիմքում ևս ընկած է միևնույն արմատը։

31 Հ. Հյուբշման, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1901, էջ 309։

32 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 317—319։

33 Նույն տեղում, էջ 317—318։

ծուրակ գետանունը։ Այստեղ արծ–արմատին կցված –ուր– և –ակ վերջածանցները նույնպես հ.-ե. ծագում ունեն (հմմտ. մի կողմից՝ բլ–ուր, փշ–ուր, թափ–ուր և այլն, մյուս կողմից՝ անտառ–ակ, գաւառ–ակ, թի–ակ և այլն)[34], Չնայած ուշ ավանդված լինելու իրողությանը, Արծուրակ գետանունը շատ հին է։ Այդ է վկայում ինչպես Արծրունի նախարարական տոհմանվան հետ նրա ունեցած ծագումնաբանական կապը[35], այնպես էլ նրա արծ-բաղադրիչի պարունակած «փայլուն, լուսավոր, սպիտակավուն» նախնական իմաստը։ Հմմտ. նաև հինբալկանյան Ἀρτάκη (Ἀρτάκης), Ἄρτεισος (Ἀρτίσσος), Ὀσδηισσός գետանունները, որոնք նույնպես բխեցվում են հ.-ե. *ar(e)r -արմատից[36], իսկ Արածանի դետանվան –անի բաղադրիչը կարելի է նույնացնել դարձյալ հ.-ե. ծագում ունեցող –ան և –ի վերջածանցներից բաղադրված –անի վերջածանցի հետ։ Հմմտ. կենդ–անի, լեզու–անի, հոլ–անի, պիտ–անի[37]։ Հավանաբար, այս նույն վերջածանցն է –անէ տեսքով առկա հնագույն հայերեն *արտանէ «աղբյուր» բառում[38]։

Այսպիսով, այս հակագրամիասնական զույգի առաջին անդամը՝ Արևելյան Եփրատը, իր հարավային դիրքի պատճառով Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության կողմից ընկալվել է որպես հարավային (վերին) լուսավոր ջրերի առարկայացում և, ըստ այդմ, կրել Արածանի անունը։ Զույգի երկրորդ անդամը՝ Արևմտյան Եփրատը, իր հյուսիսային դիրքի պատճառով, համապատասխանաբար, ընկալվել է որպես հյուսիսային (ստորին) խավար ջրերի առարկայացում և, ըստ այդմ, կրել Սև ջուր անունը (փ դեպ, այս գետի «ջուրը հակառակ յուր անվան վճիտ է»[39])։ Եթե այդպես է, ապա Արևմտյան Եփրատի մեզ հայտնի ամենահին անունը ևս պիտի պարունակեր նման մի իմաստ։ Արևմտյան Եփրատը խեթերին հայտնի էր Մալա անվամբ, իսկ ուրարտական արձանագրություններում նա (իր շարունակությունն համարված բուն Եփրատի հետ միասին) կոչվում էր «Մեծ Մելիական գետ»[40]։ Անտարակույս, երկու դեպքում էլ գործ ունենք գետի տեղական անվան տարբեր ազդացումների հետ։ Վերոշարադրյալը նկատի առնելով, կարելի է եզրակացնել, որ դրանց երկուսի հիմքում էլ ընկած է մուգ գույներ նշող հ.-ե. *mel- արմատը։ Նույն այս արմատն է ընկած նաև հայերեն մեղծ (<*մեղ-ծ) «ձանձախարիթ, մուրտ» (հմմտ. յոլովամեղծ («մրոտ»), հին հոմ. [illegible], հին հնգկ. malinā, լատիշ. melns «սև» բառերի հիմքում[41]։ Դրանցից անբաժան են հայկական Մեղ գետանունը Տարոնում, Մելաս գետանունները Կապադովկիայում, Թրակիայում և հունական Բեոտիա ու Թեսալիա նահանգներում[42]։

Ասվածները հիմք են տալիս եզրակացնելու, որ մի կողմից Արևելյան Եփրատի, իսկ մյուս կողմից Արևմտյան Եփրատի ավազանների հակադրա-

---

34 Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 235, 354, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 2, Երևան, 1975, էջ 81—82, 90։

35 Արծուրակ<Արծուր-ակ, իսկ Արծրունի<Արծուր-ունի։ Մինչև վաղարշականում հաստատվելը Արծրունիները բնակվում էին Ծոփքում (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 415, прим. 1), որը ներառում էր նաև Արծուրակի գետահովիտը։

36 D. Detschew, Die thrakischen Sprachreste, Wien, 19 7, S. 24; Б. Георгиев, նշվ. աշխ., էջ 119, 256։

37 Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 231, 354։

38 Հեսիքիոսի *Արտանէ բառի հիմքում, ըստ երևույթին, ընկած է հ.-ե. *dra-արմատը, որից սերում է նաև արտորալ (<արտ-որ-ալ) «ջտապել, փութալ» բառը։

39 Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903—1905, էջ 493։

40 Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 60, 67, 71։

41 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. Գ, Երևան, 1977, էջ 300։

42 Մեր Մեղ գետանվան «խավար», «սև» իմաստները պարունակելու օգտին է խոսում նաև անվանակիր գետի ներկայիս Կարասու («սև ջուր») թրքական անունը։

միասնական ընկալումների արտահայտություններ Արածանի (սեպագր. Arşania) և Սև ջուր (սեպագր. Mal-, Melia-) անունները ստեղծվել են վաղնջական ժամանակներից այդ գետերի ավազաններն[43] զբաղեցրած բնակչության լեզվամտածողության մեջ։ Միևնույն ժամանակ, հիշյալ հին ու նոր գետաանունների մեկնաբանություններն ու ստուգաբանությունները վկայում են, որ դրանց ծնած լեզվամտածողությունը եղել է հնդեվրոպական-հայկականլ։ Եվ դա պատահական չէ, որովհետև այդ գետերի ավազանների հնագույն բնակիչները մ. թ. ա. XIV—XIII դդ. խեթական արձանագրություններից հայտնի հայասաազիական ցեղերն էին՝ հայերիս ուղղակի նախնիները թե՛ մարդաբանական, թե՛ լեզվաբանական, թե՛ մշակութաբանական տեսակետներից։

МИФОЛОГИЧЕСКОЕ ПРЕДСТАВЛЕНИЕ О ДВУХЭТАЖНО-ДВУХЦВЕТНОЙ ВСЕЛЕННОЙ И ЕГО ГОРИЗОНТАЛЬНОЕ ОТОБРАЖЕНИЕ НА АРМЯНСКОМ НАГОРЬЕ

С. Г. ПЕТРОСЯН

Резюме

Представление о двуединстве противоположеных явлений лежало в основе многих мифологических построений. Например, в мифологических представлениях древних армян горы юга (т. е. светлой стороны света) сопоставлялись с рогатыми самцами (т. е. с «верхними-светлыми» животными), а горы севера (т. е. темной стороны света)— с их самками (т. е. с «нижними-темными» животными).

Одновременно известно, что воды юга сопоставлялись с «верхними-светлыми» водами, а воды севера—с «нижними-темными» водами. Не случайно, что потамонимы *Арацани* (*Արածանի*, Восточный Евфрат) и Сев джур (*Սև ջուր*, Западный Евфрат) также являются антонимами, так как бассейн первого когда-то входил в состав южной (светлой) половины хайаса-аззийского двуединого союза племен, а бассейн второго—в состав северной (темной) его половины. Потамоним *Арацани* (клинописн. Arsania) означает «блестящий, беловатый» и происходит от и.-е *ar(ə) g'-. а потамоним *Сев джур* дословно означает «черная вода» (ср. клинописи. назв. той же реки—Mala, Melia—<*mel-). Этиология и этимология этих потамонимов также говорят в пользу того, что хайасский (в бассейне Арацани) и аззийский (в бассейне Сев джур) этносы действительно являлись порождением как одной и той же историко-географической, так и одной и той же этноязыковой (протоармянской) среды.

---

43 Հնագույն ժամանակներում, ինչպես ենթադրվում է, Արևելյան Եփրատի ավազանը զբաղեցնում էր Հայասա-Ազի երկմիասնական ցեղամիության հարավային կեսը՝ Հայասան, իսկ Արևմտյան Եփրատի ավազանը՝ նրա հյուսիսային կեսը՝ Ազին [տե՛ս Саргис Петросян, Племенной союз Хайаса—Аззи в системе двоичных противопоставлений (ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1987, № 3, էջ 77—87)]։